Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն 20

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<21>>նոյեմբերի 2024թ. ք. Երևան

2024 թվականի նոյեմբերի 21-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 6 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Խաչատրյան — Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ.

Ա. Ստեփանյան — Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի անդամ.

Խ. Սողոմոնյան — Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ.

Տ. Գասպարյան — Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային և ջրային տրանսպորտի քաղաքականության վարչության պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Խաչատրյանը: Նիստից բացակայում էին հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը և հանձնաժողովի անդամ Ռ. Այվազյանը: Նիստն արձանագրում էր Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիրներ տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

2.Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիր/ներ/ն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 2 դիմումների քննարկում:

3.Ֆիզիկական անձանց կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 3 դիմումների քննարկում:

4. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1 դիմումի քննարկում:

5. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1 դիմումի քննարկում:

1.Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիրներ տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր ՀԱՅԿ ՂԱՆԴԻԼՅԱՆԻ /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2024 թվականի 2024 թվականի հոկտեմբերի 7-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և նոյեմբերի 5-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրում և գազաբալոնների պարբերական վկայագրում տեսակի ներդիրներ տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2024 թվականի հոկտեմբերի 7-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրում և գազաբալոնների պարբերական վկայագրում տեսակի ներդիրներ տրամադրելու մասին:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից Կազմակերպությանը տեղեկացվել է հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների վերաբերյալ, մասնավորապես՝ առ այն, որ.

1. Ըստ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի՝ անշարժ գույքի հասցեն վավերապայմանների որոշակիորեն համակարգված համախումբ է, որով միանշանակորեն որոշվում է հասցեավորման օբյեկտի տեղը բնակավայրում և որը պարունակում է առնվազն հետևյալ վավերապայմանները՝ մարզ, համայնք, ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտ (թաղամաս, հրապարակ, փողոց, պողոտա, նրբանցք, անցում, փակուղի, զբոսայգի և այլն) և անշարժ գույքի հերթական համարը: Հայտում և հայտին կից փաստաթղթերում (հայտ Ձև 2, ԱՎՕ-ի վկայական, ԱՎՕ-ի փորձաքննության եզրակացություններ) գործունեության իրականացման վայրի

հասցեն գրանցված է «ՀՀ, ք. Արմավիր, Երևանյան փողոց», իսկ շինությունը ամրագրող տեղեկություն ներկայացված փաստաթղթերում առկա չէ:

2. Բացակայում է ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 8-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում գազաբալոնային սարքավորումների տեղադրում և գազաբալոնների պարբերական վկայագրում իրականացնելու համար նախատեսված արտադրական բազայի հատակագիծը՝ գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման տեղամասերի և ճնշակային տեղամասի լայնության, երկարության, բարձրության, մուտքերի և ելքերի հստակ նշագրմամբ, որպեսզի հնարավորություն ընձեռվի նույնականացնելու լիցենզավորման ենթակա երկու գործունեության տեսակներին հատկացված շինությունների չափերին ներկայացվող պահանջները:

3. Գազաբալոնային սարքավորումներ տեղադրելու և պարբերաբար վկայագրելու աշխատանքների կատարման համար ներգրավվող Արմեն Մելքոնյանի և Գոռ Ղանդիլյանի բանվորական և ինժեներատեխնիկական անձնակազմի մասնագիտական որակավորման փաստաթղթերը չեն համապատասխանում Կարգի 9-րդ կետով սահմանված պահանջներին:

4.Բացակայում է հիմնական տեխնոլոգիական սարքավորում հանդիսացող կշեռքի ստուգաչափման վկայականը:

Գործունեության վայրի չափերը նույնականացնելու նպատակով՝ Կազմակերպությանը առաջարկվել է ներկայացնել նաև թիվ Փ/04-24-1 տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացության համար հիմք հանդիսացած՝ արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերը:

Միաժամանակ Կազմակերպությանը տեղեկացվել է, որ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացումը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Կազմակերպությունը 05.11.2024թ. ներկայացրել է լրացուցիչ նյութեր, սակայն ամբողջովին չի վերացրել թիվ ԱՍ/25.1/30626-2024 գրությամբ նշված թերությունները, մասնավորապես՝ չի ներկայացրել գործունեության վայր հանդիսացող արտադրական վտանգավոր օբյեկտի ԱՎՕ-ի վկայականում և ԱՎՕ-ի փորձաքննության եզրակացություններում շինությունը ամրագրող տեղեկությունը և չի ներկայացրել սարքավորումներ տեղադրելու և պարբերաբար վկայագրելու աշխատանքների կատարման համար ներգրավվող Արմեն Մելքոնյանի և Գոռ Ղանդիլյանի բանվորական և ինժեներատեխնիկական անձնակազմի մասնագիտական որակավորման՝ Կարգի 9-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր: Միաժամանակ, Կազմակերպության գործունեության վայրի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Կազմակերպության սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման տեղամասի բարձրությունը 3.70 մետր է, ինչը չի համապատասխանում Կարգի 18-րդ կետով սահմանված պահանջներին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին :

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ՀԱՅԿ ՂԱՆԴԻԼՅԱՆ	0 կողմ, 4 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան ու լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումի քննարկում:

2.1 Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր ԿԱՐԵՆ ԱՎԵՏԻՔԻ ՋԱՔԱՐՅԱՆԻ /այսուհետ՝ Կազմակերպություն/ 29.10.2024թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05448 լիցենզիան և լիցենզիայի N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց Կազմակերպության անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05448 լիցենզիան և լիցենզիայի N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումը:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ ՏԾ N 05448 լիցենզիայի և լիցենզիայի ներդիրի բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ԿԱՐԵՆ ԱՎԵՏԻՔԻ ՋԱՔԱՐՅԱՆ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2.2 Քննարկվեց՝

«ՍԹԱՐՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 14.11.2024թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05195 լիցենզիան և լիցենզիայի N 00001-ից N 00019-ը ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց Կազմակերպության անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05195 լիցենզիան և լիցենզիայի N 00001-ից N 00019-ը ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումը:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ ՏԾ N 05195 լիցենզիայի բնօրինակը և ներդիրների կորստյան մասին հայտարարությունը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՍԹԱՐՍ» ԱՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3. Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիան և ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումների քննարկում:

Քննարկվեցին՝

3.1 Ֆիզիկական անձ՝ ՀՐԱՉՅԱ ԲԱԲԿԵՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ 28.10.2024թ. դիմումը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման ՏՖ N 11131 լիցենզիան և N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց Ֆիզիկական անձ՝ ՀՐԱՉՅԱ ԲԱԲԿԵՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ 28.10.2024թ. դիմումը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման ՏՖ N 11131 լիցենզիան և N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը՝ դիմումը և ՏՖ N 11131 լիցենզիայի և N 00001 ներդիրի բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ՀՐԱՉՅԱ ԲԱԲԿԵՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն «Լիցենզավորման մասին»օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3.2 Ֆիզիկական անձ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈԿԻՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ 30.10.2024թ. դիմումը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման ՏՖ N 03119 լիցենզիան և N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց ֆիզիկական անձ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈԿԻՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ 30.10.2024թ. դիմումը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման ՏՖ N 03119 լիցենզիան և N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը՝ դիմումը և ՏՖ N 03119 լիցենզիայի և N 00001 ներդիրի բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ՍԱՐԳԻՍ ՄՈԿԻՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3.3 Ֆիզիկական անձ՝ ՍՈՍ ԿԱՄՍԱՐԻ ԻԳՆԱՏՅԱՆԻ 12.11.2024թ. դիմումը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման ՏՖ N 11133 լիցենզիան և N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց ֆիզիկական անձ՝ ՍՈՍ ԿԱՄՍԱՐԻ ԻԳՆԱՏՅԱՆԻ 12.11.2024թ. դիմումը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման ՏՖ N 11133 լիցենզիան և N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը՝ դիմումը և ՏՖ N 11133 լիցենզիայի և N 00001 ներդիրի բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ՍՈՍ ԿԱՄՍԱՐԻ ԻԳՆԱՏՅԱՆ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

4. «ՄՈԲԻԼ ԳԱԶ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման N ԳԲ 00109 լիցենզիան և ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեց՝

«ՄՈԲԻԼ ԳԱԶ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 13.11.2024թ. դիմումը՝ Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման N ԳԲ 00109 լիցենզիան և ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումը և դիմումին կից փաստաթղթերը՝ N ԳԲ 00109 լիցենզիայի և N 0001 ներդիրի բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՄՈԲԻԼ ԳԱԶ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

5. «ՔԱՌ ՍԵՐՎԻՍ ՍԻԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏԶ 00039 լիցենզիան և ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեց՝

«ՔԱՌ ՍԵՐՎԻՍ ՍԻԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 13.11.2024թ. դիմումը՝ Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏԶ 00039 լիցենզիան և ներդիրն ուժը ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումը և դիմումին կից փաստաթղթերը՝ N ՏՄՏՋ 00039 լիցենզիայի և N 0001 ներդիրի բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՔԱՌ ՍԵՐՎԻՍ ՍԻԹԻ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահի տեղակալ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան